

3720

42)

g(47.5-)

Z-42

1815
 1816
 1817
 1818
 1819
 1820
 1821
 1822
 1823
 1824
 1825
 1826
 1827
 1828
 1829
 1830
 1831
 1832
 1833
 1834
 1835
 1836
 1837
 1838
 1839
 1840
 1841
 1842
 1843
 1844
 1845
 1846
 1847
 1848
 1849
 1850
 1851
 1852
 1853
 1854
 1855
 1856
 1857
 1858
 1859
 1860
 1861
 1862
 1863
 1864
 1865
 1866
 1867
 1868
 1869
 1870
 1871
 1872
 1873
 1874
 1875
 1876
 1877
 1878
 1879
 1880
 1881
 1882
 1883
 1884
 1885
 1886
 1887
 1888
 1889
 1890
 1891
 1892
 1893
 1894
 1895
 1896
 1897
 1898
 1899
 1900

229

231(91.542)

Հ-38

„ԱՅԴ՝Ի ԳՐԱԴԱՐԱՆ

№ 9

ԱՌ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԱՆՑՔԵՐԸ ==

== ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ

1918 ԹԻՒՆ

ԹԱԻՐԻԶ

ԱճԱԿԱՆ. ՀԱՅԿ ԹԻՄ. ՏԱԿԱՐԱՆ

1919

3 9(47.925)
-5-42

79

493

№ 9

„ԱՅԻՒՅՑ ԳՐԱԳԵՐԱՆՆԵՐ”

№ 9

ԱՌ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՍԱՀՄԱՆԱՄԵՐԶ

ԳԱՒԱՌՆԵՐԸ

1918 ԹԻՒՆ

1005
21293



ԹԱԻՐԻԶ

Արագյուս, Հայոց Թեմ. տպարան

1919

9643

2004

ՍՍՀՄՍՆԱՄԵՐԶ ԳՍԻԱՌՆԵՐԸ 1918

ԹԻԻՆ:

1917 թւի դեկտեմբերի վերջերին Ատրպատականի ռուսական զորամասն էլ, վարակւած բոլշևիկական սկզբունքներով, սկսում է քաղաքայեւ, գիւղատեղիական գործադիր մարմինները որոշում են հեռանալ Պարսկաստանից իրբ գեկավարելով «չեղափոխական լոգունգով չեզոք» հրկրների նկատմամբ:

Ատրպատականի քրիստոնեայ ազգաբնակութեան գրութիւնը գտնում է անեկանիւթի մի կողմից Կովկասին սպառնացող բոլշևիկական վտանգը, միւս կողմից այնտեղի սովի ըսպառնալիքը և Կովկասի անորոշ վիճակը, նաև Կովկասի Սէրբի որոշումը՝ պատերազմը շարունակելու առթիւ և ազգային զորամասերի կազմակերպումը, ոգեւորում և յուսադրում են Ատրպատականի քրիստոնեայ ազգաբնակութեան՝ մնալ իրենց տեղերում, որի վրայ աւելանում է նաև չրջանի հացի առատ բերքը:

Առանձնապէս դժուար կացութեան մէջ էր գտնուում Խոյի, Սարմատի և Ուրմիայի չրջանների գրութիւնը, չրջապատւած քրդա-



21293
4

կան տարրերով, որոնք չնորհիւ Ռուս միապետական ընտրիմի և տեղական պաշտօնեաների անհասական քաղաքականութեան, սարսափ էին տարածում այդ չրջաններում, իրենց հին քրիստոնէաջինջ բնագլով:

Ուրմին և Սարմատը, իբրև քրիստոնէական խիտ վայրեր, մտածում են ինքնապաշտպանման միջոցներ ստեղծելու, սպառնացող քրդական և տաճկական մատալուտ յարձակումների դէմ, և սկսում են ձեռք բերել, ինչպէս և մահմեդականները, ռուսական նահանջող բանակից, ինքնապաշտպանման միջոցներ: Առանձնապէս լեռնացի ասորիները, որոնք դեռ Ռուս միապետութեան օրօք յայտնել էին իրենց պատրաստակամութիւնը բատակիոններ կազմելու Ռուս սպաների զեկաւարութեամբ, ռուսական այդ չրջանի զօրութեան կի քաղաքայումից յետոյ սկսում են կազմակերպել ասորական բրիգադա՝ Ատրպատականի պարանտակ անուն տակ, որի նպատակն էր ինչպէս յայտարարել էին ասորիները իրենց թուացիկով «Ազատ Ասորիստան» վերնագրով, կազմել անկախ Ասորիստանի կորիզը Ջուլամերիկում՝ իրեն յարակից ասորաբնակ վայրերով:

Լեռնական ասորիների բրիգադայի կազմակերպումը ինչպէս և քրիստոնեաների ինքնապաշտպանման պատրաստութիւնները, ըսկսում են ներքին յուզմունք առաջ բերել տեղական մահմեդական ազգաբնակչութեան մէջ

չնայած որ սրանք համոզւած էին որ այդ կազմակերպութիւնը ոչմի յետին մտքեր չունի և չի էլ ունենալու Ատրպատականի և առհասարակ պարսկաստանի որևէ վայրի և պարսիկ ժողովուրդի նկատմամբ:

Ի հետեանք այդ յուզմունքի, տեղական կառավարութիւնը պարսկական կենտրոնական կառավարութեան անունից առաջարկում է ասորական բրիգադային զինաթափ լինել և հեռանալ պարսկաստանի սահմաններից: Ասորիները հրաժարւում են այդ առաջարկը ընդունելուց և կրկին ազգացուցում ու համոզում են իրենց բոլն նպատակը և բարեկամական վերաբերմունքը շէպի պարսիկ ժողովուրդը: Պարսիկները չունենալով որևէ աէալ ոյժ, առայժմ բաւարարւած են զգում այդ բացատրութեամբ:

1918 թւի յունվարի վերջերից արդէն Խոյր, Սարմատը և Ուրմին բարոքովին կարւումեն Կովկասի հետ որևէ հաղորդակցութիւնից. այդ առթիւ օգտւելով պարսիկները սկսում են իրենց յուզմունքը արտայայտել՝ զինաթափ են անում մի քանի զինւած քրիստոնեաների Ուրմիսյում: Քրիստոնեաները, որպէսզի առ ի թշտան իրենց և պարսիկներ ի մէջ ընդհարումների, առաջարկում են պարսիկներից, հայերից և ասորիներից խառը մարմին կազմել՝ բարեկամական սերտ վերաբերմունքներ ստեղծել փոխազդարձաբար երկու ազգերի մէջ: Խոյր և Սարմատի կազմակցութիւնը որոշում է Ուրմիայի

չրջանի համար վեց հարիւր հոգուց զինւած խումբ կազմել, կէսը քրիստոնեաներից, կէսը պարսիկներից՝ թէ շրջանի խաղաղութեան և թէ զեզերախրններից կազմած առաջակային խմբերին պատժելու համար: Քրիստոնեաները, համաձայն սրաշման, ժամանակին ներկայացնում են երեք հարիւր զինւած մարդիք, զենելու տեղական դատաւորի արամադրութեան տակ, բայց պարսիկները անհիմն առարկութիւններով ձգձգում են Նորից զինաթափութեան և մէկ երկու սպանութեան ղեկավար են տեղի ունենում պարսիկների կողմից, բայց քրիստոնեաները ընդհարումների առիթ չըտալու համար զարձեալ ուղադրութիւն չեն դարձնում այդ ղեկավարի վրայ:

Պարսիկների արտայայտութիւնները ըսկսում են աւելի և աւելի խստանալ քրիստոնեաների համերաշխութեան ջանքերը ոչ մի ազդեցութիւն չի ունենում: Պարսիկները սկսում են անկախ ժողովներ անել, անձնական շահերով տարւած, Արշագ-Հմայունի ձեռնորներից (զարադազցի և տեղացի) մի խումբակով Աւրմիա քաղաքի մօտիկ Աւարդաջ գիւղի մօտերքում գայրի են կապում մի խումբ հայերի, որոնք զինւած տեղական կուսակցական մարմնի կարգադրութեամբ զնալիս են եղել զեզերախրններին պատժելու: Հայերից սպանւում է մէկ հոգի, համաձայն մարմնի հրահանգի ոչ մի գիւմադրութիւն չի ցոյց տըրւում և պարսիկ զինւորները թողնում հեռա-

նում են:

Նոյն օրը բազարում Սաման-մէլլեանում և թաղերում պարսիկները առանց որեւէ պատճառի զնգակահարում են ութը քրիստոնեաների և զինաթափ անում յիսուն հոգու ետ: Այդ ղեկավարն էլ լուսթեամբ ատնում են քրիստոնեաները, խուսափելով զնդհարումից, բաւականանում են միայն 'Իօքտ. Շէդի (ամերկական փախ հիւպ.) Թաւրիզ ուղարկած ընդարձակ զեկուցումով:

Քրիստոնեաների լուսթիւնը պարսիկների կողմից համարւում է թուլութեան նշան չնայած իւրաքանչիւր ղեկավար առ թիւ ժողովում խընդրում են վերջ տալ, յանուն համերաշխութեան, բայց և այնպէս պարսիկները շարունակում են ղեկավարը և զինաթափութիւնը: Մի քանի օր այդպէս շարունակւում է: Պարսիկ զեկավարները որոշում են խորամանկ միջոցի զիմել՝ ձերբակալել քրիստոնեաների բոլոր պարագլուխներին, որոշում են Մարչիմոնին, աւսորական բանակի հրամանատարին, ասորական և հայկական կռիւների լրիւ կազմին, աչքի ընկնող մարդկանց, ժողովի պատրուկով, դատաւորի մօտ կանչել: Այդ առթիւ քրիստոնեայն երկայացուցիչները նախօրօք ըզգուշանալով, մի քանի մարդիկ են ուղարկում ժողովատեղի և եղած կասկածները ստուգելով, մեծ ջանք են դարձնում և աշխատում են ապացուցել, որ դա եղբայրատաւանութեան ամենամեծ պատասխանատւութիւն

է հետեւել գաւաղիւնները կոչին և ամայի դարձնել գեղեցիկ Ռւսիայի գաղափայրը. մանաւանդ հայ ներկայացուցիչները յիշեցնում են 1905 թւականի եղբայրասպանութիւնը Վովկասում, դարերից ի վեր պարսիկ ժողովրդի հետ համերաշխութիւնը, իրենց հաւատարմութիւնը գէսլի Շահն-Շահի կառավարութիւնը. կոչ են տնում ամբողջին չլսել իրենց գաւաղիւր գեղափարներին և հաւատալ քրիստոնեաների անկեղծ քարեկամական վերաբերմունքին, որը պահանջում է երկու ազգերի շահերը քրդական հորդանների յարձակումների և այլ քաղաքակ. շահերի հանդէպ:

Փաղովի երկրորդ օրը 'Իրգալա կոչւած քաղաքի դարձասի կառններից պարսիկները սկսում են գնդակահարել քաղաք գացող քրիստոնեաներին, վիրաւորում և սպանում 15 հոգի. նոյնը տեղի է տեսնում Ռահայի դարձասում, որից անմիջապէս յետոյ քաղաքի բոլոր մասերի կառններից պարսիկները սկսում են հրացանաձգութիւնը: Հայերը սուրհանդակներ ուղարկելով գաղափարի մօտ, աղերսում են դատարացնել հրացանաձգութիւնը, բայց պրծբաղդաբար այդ վարձն էլ խելքի չի բերում գաւաղիւնների ձեռքում գործիք գաւաճ պարսիկ ամբախին, ատորական վարձերն էլ նոյն ուղղութիւնով, ոչ մի աղբիւնը չեն տալիս:

Յրկրորդ օրը հրացանաձգութիւնը կուսի բնոյթ է ստանում և սպանում քրիստոնեաների թագերին. ասորական բանակի հրամա-

նաւորը ստիպւած հրամայում է թնդանութային կրակ բռնալ, ենթադրելով գէթ սրբանով կոտորել պարսիկներին սթափելու իրենց սճրագործ քալերից, բայց այդ էլ իրար է անցնում: Վեց օր տնընդհատ կըսկից յետոյ, պարսիկ ամբախի գլուխ անցած սճրագործները, զգալով իրենց անգործութիւնը, գիշերով փախչում են, տանելով իրենց հետ գինւած ոյժը. իսկ ամբոխը անձնատուր է լինում:

Անմիջապէս ամենախիստ միջոցներ են ձեռք առնում քաղաքի խաղաղութիւնը պահպանելու և ըստ պարսիկների ցանկութեան հարկական պահակներ են նշանակում ազգեցիկ և աչքի ընկնող պարսիկների տների առաջ, էքսցեսների առաջն առնելու: 'Կեղերաիրէի կամ պատահական մարդկանց կողմից մի քանի կողպուտի դէպքեր են տեղի ունենում, յանցաւորներից երեքին տեղական հայ կուսակցական մարմինը ձերբակալում է անմիջապէս և դատաւորի բակում պարսիկ ներկայացուցիչների մատնակցութեամբ մաւաւն պատժի ենթարկում: Քաղաքի տղահոգութեան համար գաղափարի նախագահութեամբ ընտրւում է խառն ազգութիւններից մի մարմին, որին և արամադրւում է այժաք եղած քանակութեամբ զինւած ոյժ, իբրի միլիցիա:

Փախած պարսկական զինւած ոյժերը գրաւում են Ղուշին և չրջանի գիւղերը, այդ տեղից կապեր են սկսում հաստատել քիւրդ

ցեղապետների հետ, որոնց միջոցով տաճկական բանակի հետ: Փախույթ են Ուրմիայ Սալմաստի գիծը:

Ուրմիայի ցրեն շրջանից դաւադիր ուժերին և Սալմաստի հետ կապ հաստատելի, քրիստոնեաները ուղարկում են այդ ուղղութեամբ զօրաբանակ: Պարսիկները կարճ ժամադրութիւնից յետոյ փախչում են Ասկեարադի և այլ շրջանի գիւղերում ամրանում:

Ուրմիայի գէպքերը խաղաղ ելուց յետոյ Մարչումունը 400 զինուորներով և մի լեռնային թնդանօթով անցնում է Սալմաստ: Ուրմիայի շրջանից փախած պարսիկներին մի քանիսը անցնելով Սալմաստ, վերսկսում են իրենց դաւադիր աշխատանքները: Սալմաստի պարսիկ ժողովրդի պարագլուխները խրատւած Ուրմիայի գէպքերից, շատ զգույշ են վերաբերում Մարչումունի դալուն, ցոյց տալով ամենախսրը յարգանքի նշաններ, բնդունելու թիւններ և այլն:

Նախքան Մարչումունի Սալմաստ անցընելը քոյրը Մարսուրման Խոսրովայից սրգէն յաճախ նամակագրութիւններ անէր հանրածանօթ աւագակապիս Սմկոյի հետ: Մարչումունի դալով, այդ նամակագրութիւնը աւելի մոտեցնում էր ևս Սալմաստ: Սմկոն այն ատիճանի վատահայտ է իւր խոյ ամանելութեամբ ստեղծած, մոտեցնական կապերի վրայ, որ իւր նամակներից մէկում Մարչումունին առաջարկում է մտրա 3-ին Հին քաղաքում տեսակ-

ցելու իր հետ:

Մարչումունը, չնայած իր կոչման և գիրքին, համազում լինելով, որ անկեղծ կապ կը հաստատէ նրա հետ, վստահանում է աւագակապի տնկիղծութեան և որոշում օրը 120 զինուորներով գնում է Հին քաղաք: Հին քաղաքի հայերից, նկատելով քրդերի կռակածոտ շարժումները և կառններում նրանց գիրքերի պատրաստութիւնը, զգալով Սմկոյի դաւադրութիւնը, դուրս են գալիս գիւղից, մի քանի հոգի և նախքան Մարչումունի գիւղ մտնելը, իրենց կռակածի մասին զգուշացնում են իրեն և խորհուրդ են տալիս վերադառնալ, բայց դժբաղատար Մարչումունը նշանակութիւն չի տալիս այդ զգուշացման:

Մարչումունին ուղեկցում էին իր հղբայր՝ Դաիթը և զնդապետ Սոնդրատեղ (աւսուրական աւաջին բառալիօնի հրամանատար):

Մարչումունի և Սմկոյի տեսակցութիւնը լինում է շատ սիրալիր և տեսում է մօտ կէս ժամ, որից յետոյ Սմկոն մինչև փողոց ուղեկցում է Մարչումունին: Հէնց որ Մարչումունը հրաժեշտ է տալիս և իւր ուղիորդով նստում է կռուք, Սմկոն տարճանակի հարածներով թեւից վերստնում է Մարչումունին և հրամայում է անմիջապէս կրակ բաց անել կռուքներում դարան մտած և փողոցում եղած իր մարդկանց:

Մարչումունը անմիջապէս ցած է դալիս, աշխատում է մօտակալ խանութներից մէկում

պատասպարելի. բայց դժբաղատարար գնդակներ
րի տարափի տակ փողոցում սպանուում է:

Նդրօրը և զնդապետին յաջողուում է հա-
յերի տներից մէկում պատասպարելի: Վնդա-
պետը թիկն թիկն կերպով վիրաւորուում է:

Մարշումունի զինւորներից սպանոււ-
ն են մօտ 100 հոգի:

Խուճաղի ժամանակ տեղացի հայերից մի
քանիսին յաջողուում է փախչել. պարսիկ հա-
րեանները օգտակար չանգամանքից կոտոր-
տում և այրում են հայերի տները, մի քանի
ընտանիքների էլ ամբողջապէս օրի են քա-
չում:

Օրը մթնում է և ասորական բառա-
լիծները եկած ութին չի յաջողուում Մարշու-
մունի դիակը փերցնել: Մարտ 4-ի լուսաբու-
ցին ասորական բանակը չըջտպատում է Հին
քաղաքը ու թնդանօթներով ռմբակոծում,
բրգերը գիչերով արդէն փախած են լինում
ձարա, պարսիկները փորձեր են անում պաշա-
պանել, բայց թնդանօթային ուժեղ ռմբա-
կոծումից գիւղի մի մասը սկսում է այրել.
պարսիկներն էլ փախչում են, գիւղը գրաւում
են ասորիները և վերցնում Մարշումունի զի-
ակը, ազատում նաև Մարշումունի եղբորը և
մնացածներին: Միւս օրը Մարշումունի զի-
ակը, հայերի թոյլատրութեամբ, թաղուում է
Խոսրովայ գիւղի հայոց եկեղեցում: Լեռնցի
ասորիների յուզմունքի վրայ աւելանում է
մի քանի պարսիկ զերիների աւած տեղեկու-

թիւները՝ պարսիկների և Սմկոյի մէջ եղած
գաղտնի յարաբերութիւնների, և մարտ 2 ի
տեղական դատաւորի և քարգիւղարի՝ Սմկոյի
հետ տեսակցելու մօտին: Իբրեւ վրէժխնդրու-
թիւն, այդ տհարկու կորստի առթիւ, օրո-
շում և կրկին ռմբակոծում են Հին քաղաքը:
Պարսկական զինւած ուժերը նորից վերա-
դարձած լինելով, ուժեղ զիմադրութիւն են
ցոյց տալիս: Ասորիները գրաւում են գիւղը
և անխափ գործադրում են իրենց վրէժխն-
դրութիւնը, այրում և կոտորատում են գիւղի
մեծ մասը: Մինչև պարսկական Հին քաղաքի
զինւած ուժերի պաշտպանելը, Սմկոն յար-
ձակում է Ֆաթաուր տաճարեակ գիւղի
վրայ իր ամբողջ ձիաւորներով. ասորիները դի-
մում են հաջկական ուժերին, սրունց յաջող-
ւում է Սմկոյին փախցնել ձարա: Այդ զէպ-
քից յետոյ Հին քաղաքից փախած պարսիկ
զինւածները և չըջտնի բոլոր պարսիկ գիւ-
ղացիութիւնը հաւաքւում է Վիլման և փա-
կում են քաղաքի դարբասները: Պարսիկնե-
րը օգնական ուժեր ստանալով, միւս օրը դուրս
են գալիս Հաւթաւնի դարբասից և փորձում
յարձակւել Հաւթաւնի վրայ, մօտենում են
գիւղի սահմաններին. հայերը յանկարծակի ե-
կած այդ զէպքի հանդէպ, սկզբում ոչ մի զի-
մադրութիւն չեն ցոյց տալիս: Վտանգը սկը-
սում է արդէն սպառնալ գիւղին, ստիպւած
զիմում են ինքնապաշտպանութեան: Ասիւր
աւում է մինչև ուշ գիշեր: Հայերը տալիս են

մի սպանւած երկու, վիրաւոր և չորս ձի: Պարսիկները նորից վերագաւնում և փակւում են քաղաքում:

Այդ գէտքի յաջորդ օրը Մարշումունի ընտանիքը հայ և ասորի ներկայացուցիչներից խառն ժողով է կանչում, պարսիկների վերաբերմունքի տաթիւ: Մարշումունի ընտանիքը և ասորի ներկայացուցիչները առաջարկում են ռմբակոծել Վիրմանը, ապացուցելով, որ Մարշումունի սպանման գաւազրութիւնը սարքւած է պարսիկների կողմից և պարսկական զինւած ուժերը, որի վրայ ամեն օր տւելւում են օգնական ուժեր Խոյի և Թուրիքի կողմից, ամեն կերպ կաշխատեն զիւղերի վերայ յարձակել և քրիստոնեաներին կոտորել: Հայ ներկայացուցիչները ի նկատի ունենալով ապագայ բարդութիւնները, մանաւանդ որ ասորիները պէտք է աշխատեն վրէժխնդիր լինել ժողովրդից, համոզւում են ասորիներին յետաձգել, յայտ ունենալով որ իրենց կ'աջողուի համեմատելիութեամբ հարթել այդ խնդիրը և պարսիկները կ'զգան Ուրմիայի իրանց արած սխալը ու կ'հեռացնեն իրենց գաւաղիւններին և զինւած ուժերն, առանց կոտորածների առիթ տալու:

Ժողովում նաև լուր է ստացւում որ Ուրմիայից Գուժրէթի գծով ասորական զօրաբանակ է անցել դէպի ձարա Սմկոյին պատժելու:

Պարսիկները ձարայի վրայ գտլիք ասորական բանակի մասին լուր են ստանում և

նորից յարձակումներ են սկսում Հաւթւանի վրայ, որպէսզի գրադեցնեն այստեղից գնացող ռմբերին դէպի ձարա, իսկ պարսիկների Թուրիքից նոյն օրւոյ հասած ուժը փորձում է յարձակել Փայաջուկի վրալ, որին չի յաջողւում: Ահալիսով ամբողջ օրը պարսիկները գանազան մասերից իրենց յարձակումներով խանգարում են դէպի ձարա օգնական ուժեր ուղարկելը:

Չնայած այդ բոլորին, Հ. Յ. Դաշնակցութեան տեղական մարմինը բաց է թողնում մի թռուցիկ, որով ամենախիստ կերպով արգելւում է հայերին որեէ կողոպուտ պարսիկների թողած զիւղերում, կամ սպանութեան գէտքեր՝ քաղաքից հեռու զիւղերում, պարզաբանելով պարսիկների յարձակումները, որ պէտք որոշ դատադրութեան արգիւնը, յուսուելով, որ կառավարութիւնը և բանիմաց ժողովուրդը չաւտով կ'զգան և վերջ կ'գնեն այդ անմիա ու վառագաւոր, գործողութիւններին:

Սմկոյի վրայ գնացող զօրամասը, մի քանի ժամուայ կուլից յետոյ գրաւում է ձարան և չըջանի զիւղերը, իսկ Սմկոն 150 ձիաւորներով յաջողւում է փախչել դէպի Խոյ, որտեղ միանալով պարսիկների հետ, դորժողւում է իր գազանութիւն այնտեղում պատուարւած ասորի և հայ զաղթականների վրայ, (թուով մօտ 800 հոգի):

Սմկոյի պարտուելու երկրորդ օրը պարսիկները նամակով զինում են հայերին հետև-

եալ ըովանդակութեամբ՝ ջէլօները (լեռնցի
ատորինները) գտապիւր կերպով սկսեցին Ուր-
խայում կռիւները. փորձում են այստեղ տնել,
որով վնասում են թէ պարսիկներին թէ հա-
յերին, իսկ դուք, վայելի էք դուրսը շարու-
նակ Շահն-Շահին հայրական խնամակալութիւ-
նը, խնդրում ենք չկոտոր մնացէք և միք մի-
անալ ջէլօներին և ատորիններին. նամանաւանդ
որ դա պահանջում են ձեր թէ ներկայ և թէ
ապագայ շահերը:

Հայերը իսկապէս զբոսում են հետե-
կալը՝ մենք հայերս միշտ հաւատարիմ ենք ե-
ղիլ Շահն-Շահին և մեր գրացի պարսիկ ժո-
ղովուրդին և էլի կանք, շատ մեծ ցաւ ենք
յայտնում որ ձեր մի քանի բաղդախնդիր ան-
հատների շնորհիւ, ձեր և ջէլօների մէջ այդ կոր-
ծանի՜ վէճը ընկաւ, մենք առաջարկում ենք
նշանակել մի օր տեսակցութեան համար, ուր
կաշխատենք համագիւ ատորիններից էլ ներկա-
յացուցիչ լինի, ամեն ջանք գործ կդնենք և
յուսով ենք, որ վերջ կդնենք ալդ կորայրա-
սպանութեան: Մենք պատրաստ ենք ամեն
տեսակ ծառայութիւններ կատարելու յանուն
համերաշխութեան, յանուն խնդճ ու թշուառ
ժողովուրդի:

Միւս օրը գառաւորը կատապարելեան
և ժողովուրդի անունից յայտնում է հայերին
շնորհակալութիւն այդ բարի և մարդասիրա-
կան զգացմունքների համար, իսկ տեսակցու-
թեան օրը խոստանում է կարճ ժամանակից

յիտոյ յայտնելու: Գառաւորի նամակի հետ
միասին ատորինները ստանում են Դիմանում
պարսիկների կողմից պատանդ պահւած ա-
տորի բժիշկներից մէկից մի նամակ. բժիշկը
նամակով իբրեւ գաղտնիք յայտնում է, թէ
պարսիկները շատ մեծ ոյժ են ստացել և ու-
նին մի քանի թնդանօթներ, որոշել են շու-
տով գրաւել ամբողջ գիւղերը և անխտիր կո-
տորել բոլոր քրիստոնեաներին, ինքը այդ
գաղտնիքը իմացել է և աչքով տեսել մի քա-
նի հաջարների հասած պարսկական կանոնա-
ւոր զինւած ոյժը. խորհուրդ է տալիս առանց
ժամանակ կորցնելու անձնատուր լինել և
թշուառ քրիստոնեաների կտորածին պատճառ
չդառնալ:

5001
66719

Նոյն օրը (մարտ 17-ին) ատորական
Սալմ. բանակի հրամանատար գնդապետ Կանը
Մարշիմոնի տնում հայ և ատորական ներկա-
ցուցչական ժողով է կանչում, որին մասնակ-
ցում են հաւ Աղա պետրոսը և Միկիլ-խօշա-
բան, որոնք իրենց զօրամասերով եկել էին
ձառայ: Ժողովում յայտնում են, որ Սմկոյի
տնում գտնւած են եղել մի շարք, պարսիկ
բարձրաստիճան տնհատներից, նամակներ և
այլ գրութիւններ, որոնցով շնորհաւորում են
Մարշիմոնի սպանման ծրագրի չաշող իրագոր-
ծումը: Գնդապետը առաջարկում է պարսիկ-
ներից պահանջել իբրեւ տուգանք Մարշիմոնի
սպանման և այդ կռիւները կազմակերպելու
համար, տասը հազար թուման փող, ցորեն,



նաւթ և չաքար: Ներկայացուցչութիւնը չի համաձայնում այդ առաջարկին: Որոշում է գրաւոր դիմել պարսիկներին հետեւեալ առաջարկներով՝ 1) հետացնել քաղաքից զինւած ուժերը և դաւադիր անհատներին, 2) բանալ Թարսիզ, Խոյ և Զուլֆայի թէ՛ ճանապարհորդային և թէ՛ փոստ հեռադրական հաղորդակցութիւնը: 3) բանալ խանութները և շուկան, վերսկսել խաղաղ յարաբերութիւնները, 4) առաջարկւած հարցերին բաւարարել 24 ժամեայ ընթացքում, հակառակ պարագային բոլոր պատասխանատուութիւնը թողնւում է պարսիկների վրայ:

Պարսիկները համաձայնելով այդ բոլոր առաջարկները անմիջապէս իրադրոժելու, բացում են դարբասի դռները: Քաղաքի հսկողութիւնը ասորիները վերցնում են իրենց վրայ և նշանակում են պահակներ:

Անցնում է մի քանի օր, հաղորդակցութեան գծերը բանալու խնդիրը պարսիկների կողմից մնում է միայն խոստում: Հաւաստի լուրեր են ստացւում, որ Մարտիի գծով մեծ քանակութեամբ ձիաւորներ են եկել Խոյ, որոնք միանալով Ղիլմանից և Ուրմիայից փախած ուժերի հետ, պատրաստուած են յարձակւելու Սալմաստի վրայ: Նորից զրուցութիւնը լրջանում է. ներկայացուցչական ժողովը որոշում է անպայման դրաւել Խոյը, ցրել այդ ուժերին և կապ հաստատել Զուլֆայի հետ: Բայց իրադրոժելու հնարաւորութիւն չի

լինում, չնորհիւ Ազա-Պետրոսի և Մելիք-Խոչարայի զօրամասերի առանց հրահանգի, ցիրուցան վիճակում մեծ կողոպուտներով նոյն օրը Ուրմի վերադառնալուն: Ղիլմանում ևս սկսում են ջէյսների կողմից սրոշ անկարգութիւնների տեղիք առլ, ձիեր գրաւել ևայլն: Մարտ 24-ին Սալմաստ են հասնում, հակառակ ստացւած նպաստաւոր լուրերի, Սարայի շրջանի գաղթականները, նոքա յայտնում են, որ Վանը երկար կռիւներից յետոյ, տաճկական մեծաքանակ բանակի հետ, որոշել է գաղթել և իրենց հեռախօսով յայտնել են շուտափոյթ կերպով գաղթել զէպի Բերկրիկայէ, բայց իրենց հնարաւորութիւն չի եղել Բերկրի գնալ, միակ ելքը դառն են Սալմաստ գաղթելը: Զինւորական ռազմական յայտնում է, որ Սմկոն մեծաքանակ քիւրդ և պարսիկ ձիաւորներով եկել է Դուշման-Պարայի ձորը և պատրաստուած է յարձակւել Սալմաստի վրայ: Պարսիկները այդ լուրերը իմանալով անմիջապէս կրկին հաւաքւում են Ղիլման: Մարտ 27-ին հտառխոյզները բռնում են մի քանի քիւրդ լրտեսներ, որոնք յայտնում են թէ Վանը զրաււած է տաճիկների կողմից և հայէջ տնտրոշ բազմութեամբ գաղթել են արդէն Այդ լուրը մեծ սարսափ է առաջացնում քրիստոնեաների մէջ. Հայկական Զինւորական խորհուրդը որոշում է շուտափոյթ կերպով բառալիսն կազմակերպել և ապրիլ 1-ի համար զօրահաւաք է նշանակւում 18-ից մինչև 40 տարեկանը:

Մարտ 29-ին անսպասելի կերպով Վա-
նի գաղթականութեան ծայրը հասնում է
Սալմաստ քաղցած, հիւժւած և ծանր վիճա-
կի մէջ, մեծ թւով վիրաւորներով և ծանր
հիւանդներով, որոնք ութ տմիս անընդհատ
հսկայական տարածութեան Ֆրոնտներում
պաշտպանելիս են եղել տաճկական մե-
ծաքանակ բանակի դէմ. և այլևս հնարու-
թիւն չուենալով շարունակելու, որոշել
են գաղթել դէպի Կովկաս, բայց ճանապարհ-
ներ թշնամին արդէն բռնած է լինում. գաղ-
թականութեան մի մասին միայն յաջողում
է անցնել դէպի Սրևան, իսկ միւս մասը, թը-
ւով մօտ 18,000 հոգի ստիպւած անցնում
են Սարայ-Ղօթուր գծով, որոնք հասնելով
պարսկական սահամանադուիւր, իրենց չըջա-
նային Կամիսար Կ, Համբարձումեանի ուղեկ-
ցութեամբ, նամակով դիմում են Խոյ, պաք-
սից կառավարութեան, իբրև բարեկամ պե-
տութեան, խնդրելով թողալու թիւն և հո-
վանաւորութիւն: Իսլաոսախոն այդ դիմումի,
քրդերը միացած պարսկական ձիււորների
հետ, յարձակւում են Ղօթուրի ձորում գաղ-
թականութեան վրայ: Երկու օր անընդհատ
կռիւից յետոյ գաղթականութիւնը մեծ քանա-
կութեամբ զոհեր և աւար տալով, ստիպւած
թեքւում է դէպի Սալմաստ: Այդպիսի մեծ քա-
նակութեամբ գաղթականութ. անսպասելի գա-
լը, տնտեսական ծանր վիճակ է ստեղծում Սալ-
մաստի համար: Բարեբախտաբար Կովկասեան

Հայոց Բարեգործական ընկերութեան Սալմաս-
տի ճիւղը հնարաւորութիւն է ունենում ան-
հրաժեշտ չափով օգնութիւն հասցնելու
հացով և ցորենով, նաև իր տրամադրութեան
տակ եղած, տեղոյն Քաղաքների Միութեան
ճիւղի հիւանդանոցի մնացորդներով բաց է
անում բուժարան և հիւանդանոց:

Ապրիլ 3-ին Խոյում հաւաքւած պարս-
կական կօզակները շարժւում են կրկին դե-
պի Սալմաստ և զինելով զրաւում են Մու-
ղանջիկը ու Կիրմանի մօտի ռուսական նախ-
կին կազարման, որտեղից փորձում են գրա-
ւել դիմացի Ահման զիւլը, ուր տեղաւոր-
ւած էին նորիկ գաղթականութեան մի մա-
սը: Թաւրիզի ճանապարհից Սաղաղեանի գծով
էլ պարսկական մի արիշ զօրամաս փորձում
է գրաւել Ղալսուսարը և Փայաջուկը: Մինչ
ապրիլ 10-ը տեղի են ունենում ոյժեղ և ան-
ընդհատ կռիւներ: Հայերը տալիս են 13 ըս-
պանւած, սրտեցից մէկը ռուս սպայ և 10 վի-
րաւոր, անօրինակ 14 սպանւած 16 վիրա-
ւոր: Սաղաղեանի գծի վրայ գործող պարս-
կական զօրամասը տալով զերի իրենց «Ջէյ-
րան» կոչւած թնդանօթը, փախչում է Թա-
սուջ, գրաւում է նաև Մուղանջուկը: Նոյն
օրերը տուրական զօրամասը, առանց հրա-
հանգի, գրաւում է Կիրմանը:

Կիրմանի գրաւման և այնտեղում եղած
անկարգութիւնների լուրը հասնում է առա-
ւօտեան կանուխ: Հայերից անմիջապէս ներ-

կայացուցիչներ են դնում Դիրման և պարսիկներին իրենց հովանաւորութեան տակ վերցնում, հաւաքելով քաղաքի զանազան մասերից ամերիկական միասիայի երեք շէնքերում 6-7 հազար հոգու չափ, պիտաւորապէս կին և երեխաներ: Եղամարդկանց մեծ մասը զինւած ուժերի հետ փախած են լինում:

Լեռնացի ասորիները վրէժխնդրութեան ոչ մի միջոցի առաջ կանգ չեն առնում: Հայ ներկայացուցիչները մեծ ջանք գործ դնելուց յետոյ, գտնում են անհնարին միասիայի շէնքերում պահել պարսիկներին և հովանաւորել, որոշում են բոլորին տեղափոխել Հաւթւան:

Լեռնացիները պահանջում են թէկուզ մի քանի ազդեցիկ պարսիկներ ընտանիքներով իրենց արամազրութեան տակ թողնել, իբրև պատանդ, Խոյի քրիստոնեայ գաղթականութեան կոտորածից մնացորդներին գէթ անվտանգ ցայմաստ փոխադրելու: Հայերի և լեռնացի ասորիների ներկայացուցիչների մէջ տեղի է ունենում խոշոր վէճ, նոյնիսկ փոքր ձեր են լինու՞մ լեռնացի զինւորների կողմից ռումբեր նետել ամբոխի մէջ, որը նոյնպէս խանգարում է: Հայկական պահակներ են նշանակւում մինչ քաղաքի դարբասը միասիայից և գաղթականութեան ճամբում գէղի Հաւթւան:

Ամբոխի մի մասը դարբասից դուրս գալով չեղում է և փոխանակ Հաւթւան գնալու, անցնում է ասորաբնակ Խոսրովայ և

Սաւրայ գիւղերը. իսկ մնացածը՝ մօտ 4-5000 անցնում է Հաւթւան, որտեղ և պատուարւում, տալիս են հաց և այլ յարմարութիւններ:

Հաւթւանում պարսիկ գաղթականութեան երկար պահելու հնարաւորութիւն չի լինում, քաղաքական որոշ հանգամանքների և ալլահաւած ասորի և հայ անհատների շրնորհիւ: Մի քանի օր պահելուց յետոյ, տալով 3 օրւայ անդի պաշար, պահակներով ճանապարհում են Թաւրիզ և Դիւնէյ:

Քրիստոնեաների յաւաստա փնտիր ու չինչով չի փոխւում: Ապրիլ 24-ին Վասպուրականի ընկերների առաջարկութեամբ ներկայացուցչական ժողով է կայանում. Վասպուրականի ընկերները առաջարկում են տոանց ժամանակ կորցնելու գաղթել Խոյի գծով Աովկաս: Մի քանի հոսանքներ են առաջ դալիս, ժողովը մնում է անհետեանք: 27-ին նորից ժողով է տեղի ունենում, որոշւում է գիմել Ուրմի և առաջարկել միացելոյ այժմով զբաւել Խոյը և կապ հաստատել Աովկասի հետ. ծայրահեղ զէպքում—եթէ Ուրմին չհամաձայնել, այդ անել տեղական ուժերով. ժամանակ է նշանակւում մինչև մայիս 5-ը:

Մայիս 1-ին Ուրմիան յայտնում է, որ Հ. Ներսէս որբագանի գլխաւորութեամբ հայ և պարսիկների կողմից հաշտարար Ամիսսիա է եկել Ուրմիայ, ուստի խնդրում են Խոյի վրայ գնալու ծրագիրը թողնել, ինկատի ու-

նենալով, որ պարսիկ կառավարութիւնը խոստանում է բարեկամական յարաբերութիւն հասնել բոլոր ճանապարհները: Իսկ մինչ այդ, Խոյի գրաւման ծրագիրը գտնում են վաղաժամ, նոյնիսկ յանցանք, Սալմաստի կողմից, սկզբունքային նկատումներով:

Հաշտարար Կոմիսսիան Ուրմիայում ապագայնախօթիւններից խառը ժողով է կանչում և հաշտութեան պայմանագիր ստորագրել առաջիկա պարսիկների և քրիստոնեաների կողմից, որոշում է նաև խառը օգնութիւններից միլիցիայ կազմել: Պարսիկ կառավարութեան կողմից ներկայացուցիչը, կառավարութեան անունից խոստանում է լայն բարեկամական վերաբերմունք, բայց դժբաղդաբար այդ խոստումներից ոչ մէկը չի իրականանում, որին իբր թէ առիթ է լինում տաճկական բանակի, Բարանդուզի կողմից, Ուրմիայի վրայ յարձակումները: Հաշտարար Կոմիսսիան խառը ժողովի կողմից մարզիկ է ուղարկում տաճկական բանակ հարցով՝ թէ ինչ են ուզում չէզոք երկրից և ժողովրդից: Տաճկական բանակի հրամանատարը պատասխանում է, թէ իրենց հրամայած է զբաւել Ուրմիան, Սալմաստը, Թաւրիզը և Մարաղան, ուստի առաջարկում են քրիստոնեաներին անձնատուր լինել և յանձնել բոլոր գէնքերը, այլապէս այդ կարելի բռնի սլոխով:

Տաճիկների այդ յայտարարութիւնը քրիստոնեաներին դնում է չմեղուցիչ դրութեան

մէջ, չնայած Բարանդուզի ուղղութեամբ քրիստոնեաներին յաջողում է տաճիկներին յետ մղել և 200 հոգի էլ գերի վերցնել, բայց և այնպէս դրութիւնը մնում է անորոշ: Մարչիմունն էլ մարդ է ուղարկում Ներսէս սրբազանի մօտ յայտնելով, որ Սալմաստից հայերը որոշել են գաղթել Զուլֆա, իսկ ասորիները ոչ, ուստի խնդրում է անմիջապէս գրել Սալմաստ և արգելիլ հայերի գաղթը: Այդ առթիւ հայերի մէջ, մասնակցութեամբ Ներսէս սրբազանի և ասորիների, մասնակցութեամբ Մարչիմունի, ժողովներ են կայանում և որոշում կայացնում բոլոր սլոխով գիմազրել տաճիկներին և չգաղթել Ուրմիայից: Նոյնը սուրհանդակով գրել Սալմաստ, առաջարկելով չգաղթել մինչ բնդհանուր որոշումը:

Ուրմիայի քրիստոնեայ և մահմեդական ժողովրդի կողմից ընտրւում է գեկաատուրական մարմին, տեղական ապահովութեան համար, նախադաշնութեամբ Ուրմիայի նահանգապետ Իշլալ-ուլ-Մուլլի, կազմած Ամիրիկական փոխ-հիւպատոս դօքա, Շէտից, Թաւրիզից ուղարկւած Ատրպատականի Կենտրոնական մարմինների կողմից պատգամաւոր ձեւակից և լեռնացի ասորի զօրամասերի հրամանատարներից՝ Պետրոսից և Մեկը-Նօշաբայից: Նորընտիր գեկաատուրական մարմինը համարելով քրիստոնեաների և պարսիկների մէջ հաշտութիւնը կատարելապէս կայացած, առաջարկւում է Ուրմիայի բնակչութեանը

սկսել դաշտային և այլ խաղաղ աշխատանքները:

Հաշտարար կոմիտեիան իրա դերը վերջացած համարելով, վերադառնում է Թաւրիզ: Նրա Շարաֆխանէ հասնելու օրը, տաճկական 100 ձիաւորներ գրուում են Շարաֆխանէին: Կոմիտեիային յաջողւում է Թաւրիզ գնալով ազատել ձերբակալելուց:

Տաճկական զօրքը մայիս 30-ին գրաւում է Թաւրիզը, Մարաղան և երկաթուղու զիծը մինչև Զուլֆա:

Ուրմիայի և հաշտարար Կոմիտեիայի տրւած բացադուծիւնը Խոյի գրաման և Զուլֆա գաղթել կամ կապ հաստատելու մասին Սալմաստին դնում են անորոշ վիճակի մէջ, բայց և այնպէս որոշւում է կրկին գիմել Ուրմիա. բացատրելով սպասելիք տաճկական մօտալուտ վտանգը և ժամանակի անտեղի վատնումը:

Մինչ այս մինչ այն, արդէն մայիս 4-ին Սալմաստի հայկական հետախույզ խումբը յայտնում է, որ տաճկական զօրամասը գրաւել է Մուղանջուղը և Իիլմանի նախկին ռուսական զօրանոցը: Ժողովուրդը ընկնում է նոր տենդային և ջղազրգիւ կացութեան մէջ: Նրեք օր անընդհատ թշնամու կատաղի յարձակումներին քրիստոնեաները ճակատագրական դիմադրութիւն են ցույց տալիս: Վերջի օրը, այս բուռը ժողովրդի հանդէպ, վիթխարի գազան տաճկական բանակը, փախուստի

է մատնւում դէպի Խոյ. չնայած իւր մի քանի անգամ դերակշռող թիւն և առատ թնդանութային և գնդացիային պաշարին, տալով մեծ քանակութեամբ մարդկային կորուստ:

Տաճիկ և քիւրդ զինները յայտնում են նաև որ կռւում սպանւած է տաճկական մի գնդապետ և Սմիտյի եղբայր Խուրշիդը, որը եղբոր հետ միասին իրենց մարդկանցով կռււում էին աջ թեւում պարսկական 500 ձիաւորներին միացած:

Ուրմին ի սլաւոսխան գաղթի ձգագու մի, մայիս 13-ին Սալմաստ է ուղարկւում տեղական դիկտատուրական մարմնի անդամներին Իջլու-ու-Մուլքին և ձերմակին: Ընկ. ձերմակը գեկուցում է տալիս իրերի գրութեան մասին, առանձնապէս կոնգ է առնում Պարսից կառավարութեան բարեկամական վերաբերմունքի վրայ: Զուլֆա գաղթելու խնդիրը համարում է յանցանք, չհշտելով ամբողջ Կովկասին սպառնացող տաճկական վտանգը և սովը, նաև գնդապետ Խարազեանի զօրամասի Զուլֆա լինելը և նրան հրահանգը՝ վտանգի դէպքում մեկ օգնութեան գալու մասին, հակառակ պարագային եթէ գաղթը տեղի ունենայ, զգուշացնում է, որ Խարազեանին կարգադրւած է ամենախիստ կերպով արգելել ժողովուրդին Զուլֆա անցնելը: Ժողովը լսելով ընկ. ձերմակի գեկուցումը, որոշում է առայժմ գաղթի խնդիրը յետաձգել: Իջլու-ու-Մուլքն էլ խոստանում է տաճկա-

կան ոյժերը հեռացնելու միջոցները ձեռք առնէ Պարսկաստանի սահմաններինց։

Այսպիսի պայմանների մէջ գաղթի ծրարագիրը ժամանակաւորապէս վերանում է, որի փոխարէն մայիս 18-ին որոշուում է անպայման աշխատել կապ հաստատել Ջուլֆայի հետ։ Դիմում է Ուրմիայի աջակցութեան, Սալմաստում տրամադրելի ուժերի քչութեան պատճառով։ Ուրմիան հաւանութիւն է տալիս, խոստանալով տրամադրել 5000 հոգու չափ զօրաբանակ Աղա-Պետրոսի գլխաւորութեամբ մայիս 22-ի համար։ Խօստումի ժամանակը լրանում է և Ուրմիան պատճառարանելով Ասկերաբաղի կռիւները ձգձգում է մինչև ամսիս 26-ը, հապրողելով, որ 3000 հոգի միայն հնարաւորութիւն ունեցան տրամադրել, որոնք և մեկնեցին։ Յաջորդ օրը Աղա-Պետրոսը մի քանի ձիաւորներով հասնում է Խանթախթ ուր և կայանում է զինւորական խորհուրդ, յարձակման ծրագրի համար խորհրդակցութեան։

Նոյն օրը Ուրմիայից հեռախօսով հաղորդում են, որ այնտեղ է հասել տաճկական բանակից պատգամաւորութիւն, տաճկական սպայի ուղեկցութեամբ, նոքա բերել են 3 նամակ, մէկը Մոսուլի ասորական պատրիարք Էմմա-Նուէից ուղղւած Մարչիմոնին, երկուսն էլ տաճկական բանակից, մէկը նոյնպէս Մարչիմոնին, միւսը Աղա Պետրոսին։ Նամակների բացման համար խնդրում են Մարչիմո-

նի կողմից ներկայացուցիչ ուղարկել (Նորբնա-Մարչիմոնը Սալմաստումն էր) և Աղա Պետրոսին ներկայ լինել։

Յաջորդ օրը Ուրմիայից դարձեալ հեռախօսով յայտնում են, որ տաճկական բանակից նոր պատգամաւորութիւն է եկել բաղկացած 3 զինւորից և մի սպայից։ Տաճկական բանակի հրամանատարը, պատգամաւորութեան միջոցաւ առաջարկում է Ուրմիայի և Սալմաստի քրիստոնեաներին անմիջապէս զինաթափ լինել, առանց իրեն նեղութիւն պատճառելու։ 29-ին վաղ առաւօտեան Սալմաստի հայկական հետախոյզ խումբը յայտնում է որ Սուլուի (Դիլմանից դէպի հիւսիս արեւմուտք) ուղղութեամբ տաճկական մեծ քանակութեամբ ձիաւորներ են հաւաքում։ Ձինւորական հրամանատարութիւնը զնդապետ Տաբուէի գլխաւորութեամբ անմիջապէս ռազմական ծրագիր (Дѣло войны) է մշակում, բաժանելով զիրքերը 4 մասի Վազաչի-փոստից (Ասլանիկ գիւղ) սկսած մինչև Չորանլու-ծովափը (45-50 վերստ տարածութեան)։ Վեներոնի երկու զիրքերը յանձնում են հայկական զօրամասերի, իսկ աջ ու ձախ թևերը՝ ասորական զօրամասերին։ Յունիս 1-ի առաւօտեան շատ վաղ քրիստոնեաներ անցնում են յարձակման։

Թշնամին ուժեղ թնդանթթային կրակ է բաց անում. ամբողջ օրը երկու կողմերն էլ զիրքերից չեն գուրս գալիս. կռիւը տևում է մինչ ուշ գիշեր. հայերը ունենում են մի ըս-

պանեաժ, երեք վիրաւոր: 2-ին ասորական
գորամասերը աջ և ձախ թեկերից անցնում են
առաջ, թշնամին ուժեղ դիմադրութիւն ցոյց
տալով յետ է նահանջում: Թշնամու բռնած
կարեւոր բարձունքները գրավւում են, որը
նեղացնելով օդակը, սկսում է ուժեղ կերպով
ւժքակածել կենտրոնի հայկական դիրքերը:
Հայերը այդ օրը ևս ունենում են 2 վիրա-
ւոր, 2 սպանւած: 3-ին թշնամին Խանաօորի
ուղղութեամբ ուժեր է ստանում և գրաւում
Հին քաղաքը և Այան գիւղերը, չուտափոխթ
հայկական դիրքերից ուժեղացնելով ասորա-
կան ձախ թեկը, թշնամուն յետ են մղում Հին
քաղաքից և Այանից, վերցրւում է 8 գերի
15 հրացան և 7 ջորի՝ բեռնւած գնացանք ըս-
պայական պարագաներով և վաճառչաւով:
Թշնամին միւս կողմից աջ թեկում գրաւում է
Բեաֆ գետգլուկը ուր գործում էր Աւրմիայից
եկած ասորական օգնական ոյժը Աղա-Պետ-
րոսի գեկավարութեամբ:

Այդ ժամանակ արդէն սարկւում է, որ
Աղա-Պետրոսը ոչ թէ 3000 հոգի կուտոյ ու-
նի, որի համեմատ կազմւած է եղել ծրագիրը
և յանձնւած այդ պատասխանատու գիծը՝
Աւրմիա տանող միակ ճանապարհը, այլ նա
ունի 500 հոգի, այն էլ մեծ անկարգութեամբ
ցիր ու ցան եղած այս ու այն դիրքերում:

Աւրմիայի, յանձին Աղա-Պետրոսի, այդ
վերաբերմունքը մեծ լքում է առաջ բերում:
հաւատալով նոցա խոստման, այդպիսի մեծ

տարածութեան վրայ դիրքեր է որոշել:
Քրիստոնեաների գրութիւնը արդէն սկսում է
լրջանալ, թշնամին սպաւնում է լեռնից իջ-
նել և գրաւել տափարակը ու Խանթախտը,
որով և փակել քրիստոնեաների միակ նա-
հանջի գիծը դէպի Աւրմիա: Այդ առթիւ լուր
է արւում Աւրմիա, որտեղից դիչերով անմի-
ջապէս գալիս է Ասրպատ. ընդ հրամանատար
գնդապետ Վազմինը, որը տեղ հասնելով, իւ-
րա վրայ է վերցնում կուր գեկավարութիւնը:
Թշնամին դիրքերը ուժեղացնում է օգնական
ուժերով, կաւիւր կատապի բնոյթ է ստանում:
Գեթիներից պարգւում է, որ միայն կենտրոնի
դիրքերի վրայ թշնամու կողմից աշխատում
են 12 թնդանօթ և 16 գնդացի: Աջ և ձախ
թեկից ասորիները, առանց հրահանգի ըս-
կաւում են յետ գալ դիրքերից: Հայերը ապիս
են 2 սպանւած և 6 վիրաւոր: 5-ին թշնա-
մին սկսում է առանձին ուշադրութիւն դարձ-
նել աջ թեկի վրայ: Աղա-Պետրոսը յետ է նա-
հանջում իր պաշտպանելու Խանթախտի գի-
ծը: Ձախ կողմից էլ թշնամին գրաւելով Հին
քաղաքը սկսում է սպաւնալ կենտրոնի գիւ-
ղերին և հայկական դիրքերի թիկունքին: Ոչ
մի միջոց չի օգնում ասորիներին վերադարձ-
նել դիրքերը: Հրամանատար Վազմինը, տես-
նելով այդ կրիտիկական գրութիւնը, ինչպէս
չէշտում է հրամանում, կատարում է իր վեր-
ջին պարաքը ժողովրդի հանգէպ, հրամայում
է ժողովրդին առանց ժամանակ կորցնելու

դադ[թե]լ դէպի Խան-Թախտ-Ուրմի: Սկսւում է
չանհաւած սոսկալի խուճապ ժողովրդի մէջ:

Փամբը 5-ից կենտրոնի դիւզերից էլ ըս-
կաւում է աներեւակայիլի անկարգութեամբ
զաղթ—փախուստ պէպի Սան թախտ: Աննկա-
րագրելի են այդ ստակալի տեսարանները,
տանջանքները, մթութեան մէջ, անձրևի տակ
տաաննակ հազարաւոր ամբողջ սայլերով, բեռ-
նակիրներով, գլուխը կորցրած իրար ոտնա-
տակ տալով աճապարում են փախչել տաժա-
նիլի մահաւան գրկից... Հայկական գործառ-
սերը յետ են նահանջում Ահրեան, իսկ ասորի
զինւորները նախապէս զաղթելիս են լինում
Ուրմի: Թշնամին բոլորովին մօտենալով կեռա-
րոնական դիւզերի պարիսպներին, անընդհատ
ուժրակոծում է թնդանօթալին և գնդալիքա-
լին կրակով:

Ղալառար և Փայաջուկ գիւղերում երեւում են հրդեհներ, որոնք առաջ էին եկել այդ գիւղերից նահանջի ժամանակ պահեստները կրակելով: Թշնամին նկատելով նահանջը, արագ կերպով առաջանում է անբնդհատ ուժակոծումով: Խուճապը սաստկանում է ժողովրդի մեծ մասը խողնում է, գլուխը ազատելու համար բռնած սայլերը: Ճանապարհները ծածկած են լինում վարարած անոնների ջրերով, որոնց ազդում է սայլերին չը գիմացող կամուրջները: Մերերի, երեխաների և կանանց ճիչը ու վայնասունը... հարագատները թողնում հեռանում են... կհանքի

և մօտևան տաժանելի կռիւ։ Քոչաւիչ գիւղի մօտ անտանելի ողորդաւթիւն է կաաարւում՝ նեղ և միակ հօնապարհից անցնող առւիշց սաղիւրը խրւում են հանճառ օրդմերում և հանապարհը փակւում։ Փողովուրդը իրար է անցնում. ուժեղի և թոյլի կռիւ է առաջ գալիս։ Թնդանօթային և գնդացիրային կրակը բոլորվին մօտենում է, չեաի գացողները գաւում, աղաղակում են—ապատեցէք ձեր կեանքը, ով ինչպէս կարող է։ Մի բարեպատեհ հանգամանք միայն՝ մթնթիւնը, փրկում է այդ թշուառ ժողովրդին պահիճի ճիւղաններից։

Այսպիսի ծանր առնջաճիւղերի եւ ապրումների առկա փախուստը շարունակուում է, բայց եւ այնպէս ճակատագրին յանձնւած գրծբազմ ժողովրդի յետին մասը Սանթախտի մօտերքում լուսորացին ենթարկուում է թշնաւմու յարձակման, սրանց պարզուում է, թէ Ազա-Պետրոսը, այդպէ՛ր կոչւած իր օգնական զօրամասով փոխանակ մնալու, ըստ վերջի հրահանգի, Սանթախտի գիծը պաշտպանելու, մինչ պաղթի ծալքը հասնելը, փախչելիս է եղել Ուլմիտ:

Հնարաւորութիւն չի լինում դժբաղդաւար ստուգելու կտրուածի և գերի մնացածների թիւը: Սկսեմքն անընդհատ հետապնդում է և պրաւում Ղուչին: Փողովուրդը առանց նշանակութիւն տալու թնդանօթի գնդակների տարափին, չարունակում է իր փախուստը:

Եւ ին ժողովուրդը ուժառայաւ, մեծ մասն
որն անգամ հացի պաշարը ճանապարհին թող
դած, հասնում է Ուրմիայի դաշտերը: Ուրմիայի
հայկական գործառնայ մի վաղա Սարմատի
հայկական մասերի հետ միասին մնում են
Քեարիմարաք: Վատնգը կարճ ժամանակով
անցած է համարում:

Ուրմիայում խառը ժողով է կազմուում
ապագայ անկիւնների մասին խորհելու: Գաղ-
թականութիւնը պնդում է շարունակել գաղ-
թը առանց ժամանակ կորցնելու զէպի Պարս-
կաստանի խորքը: Ժողովը վերջնական կերպ
կացութեան չի դալիս, շնորհիւ տեղացիների
կողմից առաջ եկած հոտանքների, որոնք ճա-
նապարհների սովի և ծարուի սարսափը հա-
ւատար են դատում մնալուն և թշնամու ձեռ-
քից կտորու հլու: Առաջարկներ են լինում
անգամ կտորել ծերերին և երեխաներին,
իրեն անգործների՝ սովի, ծարուի և չղի, ա-
նապատներով ճանապարհորդութեան, և գաղ-
թիլ գէպի Հարաւ:

Որոշում է լսել նաև ասորիների կար-
ծիքը և նոցա բռնկիւք զիրքը գաղթի նկատ-
մամբ: Գին կայանում է հայաստրական
խառը ժողով, զրութիւնը միանգամ և վերջ-
նականապէս որոշելու համար: Գաղթը բն-
գունում է զէպի Հարաւ — Անգլիական բա-
նակ, և որպէսզի գա կատարի ապահով, որոշ-
ում է թշնամուն կարճ ժամանակամիջոցում
հեռացնել Ղուչիի չրջանից, և գործառնայ

սողարկել Հարաւային գիծը բաց անելու:

Երկու ուղղութեամբ էլ ուղարկւում են
հայկական գործառնայ. ասորիները անհա-
կանայի բացադրութիւններով խոտացած քա-
նակութեամբ զինւորներ չեն տրամադրում:
Հարաւի գծում թշնամին խուճապի է մատնե-
ւում, հայկական գործառնայ գրաւում է Գա-
չաղը և հետապնդում մինչ Հէյդարաբադ,
վերցնում է 14 գերի և բաւական քանակու-
թեամբ փամփուշտ նաև պարսկաւորման այլ
միջոցներ: Գերիները յայտնում են, թէ սովը
չտա է նեղում իրենց, իբր թէ զինւորները
պատրաստւում են անձնատուր լինել տեղաւ
հրամանատարի կամքից, եայլն:

Ղուչիի ուղղութեամբ վերցած գերի-
ները յայտնում են, որ Անգլանիկը իրա բա-
նակով բոլորովին մտնեցիլ է Խոյին և ուժեղ
կռիւ է: Միաժամանակ հայ և ասորական հե-
տախոյգները յայտնում են, որ Ղուչիի ուղ-
ղութեամբ գէպի Խանթախա խալ թնդանե-
թային ձայներ են գալիս:

Այդ լուրերի հիման վրայ հոր յոյսեր
են ծնում թէ ժողովրդի և թէ զեկավար չըր-
ջանի մէջ: Գաղթի վերաբերմամբ, ոմանք է
առաջարկում են ամբողջ ուժերը լարել, Սալ-
մաստ — Խոյ գծով գաղթիլ Զուլֆա. ոմանք,
զլիստորապէս ասորիները, միանգամայն գէմ
են լինում գաղթին, համարելով միակ ելքը՝
մնալ Ուրմիայում և պաշտպանել, ոմանք էլ-
լուրերին չվստահանալով առաջարկում և ոլըն

գում հն անմիջապէս գաղթել Հարաւ: Այսպիսով գաղթի խնդիրը մնում է առկառիւս և անհետեանք:

11-ին երկու ուղղութիւններից էլ վերացրած նոր գերիները պնդում և հաստատանում են Անդրանիկի Խոյի կռիւները, որին իբր համակցուցիչ փաստը, յայտնում են այն, որ իրենց հրամայւած էր հետապնդել գաղթականութեան, բայց Անդրանիկի յանկարծակի Խոյին մօտենալը փոխեց ճրագիրը և իրենց զօրքի մեծ մասը յետ կանչեց շուտափութ Անդրանիկի դէմ ուղարկելու:

Նոյն օրը Բանդ կոչւած (Աւրմայից դէպի արեւմուտք) զիւրքերում, հայաստրական զօրամասը խլում է տաճիկներից մի թնդանութ, բառալիօնի շտապը մեծ քանակութեամբ իրեղէններով և զօկումնաւորներով նաև 18 գերիներ:

Այդ պօկումնաւորներում աչքի է ընկնում մի հրաման, ուղղւած Սարմատի և Աւրմայի տաճկական բանակների հրամանատարներին. հրամանը ուղարկւած է լինում Մօսկոյից, որով հրամայւած է լինում մօրիս 19-ին ն. ա. բոլոր զօրքից անցնել յարձակողականի. Սարմատի շրջանի զօրամասին հրամայուած է լուսարացին երեք զօրքով անցնել յարձակման. չինայից ուժեղ թնդանութային կրակը, ամեն կերպ աշխատել կտրելու Խանթախտի զիծը և գերի վերցնել բոլոր կուռղ ուժերին. նաև ինչ որ մութ արտայայտութիւններ ընդհանուր կոտորածի մասին:

Եթէ այդ չի յաջողւի, թողնել ժողովրդին և կուռղ ուժերին, անցնել Ղուչչիի գետակի ձորը, կտրելով նախօքը գետակի բարձունքը, թնդանութային կրակով ժողովրդի խուճապը ուժեղացնել. յաջող պարագային նոյնը, ինչ Խանթախտի համար էր հրամայւած:

Եթէ այդ էլ անյաջող կանցնի, թողնել ժողովուրդը գետագոյն անցնի, թնդանութային և զնդաքիրային կրակով հետապնդել մինչ Չոկարալուի կամարջը և այդ տեղ պառակտել մինչ Հարաւային զօրամասը իր գերը կ'կտարէ այն է՝ թնդանութային ուժեղ կրակով յետ մղէ հայաստրական զինամեքին և հետապնդէ մինչ քաղաքի պարիսպները: Այդպիսի պաշարւած գրութիւն սակզմելուց յետոյ, անցնել գիշերային սինամարտի քաղաքի մէջ: Խիստ կերպով կը պատմէ այն զօրամասի հրամանատարը, որի զիծը կ'պատռէ կամ զինւած ուժը կամ ժողովուրդը:

12-ին հայաստրական հետախոյզները նորից լսում են Ղուչչիի շրջանից կրկնող թնդանութային ձայներ: Յամառ լուրը ստուգելու համար, սրըչում է ուժեղացնել այդ զօրի զիւրքերը և գրաւել Ղուչչին: Իժարախտութար այդ անելու հնարաւորութիւն չի լինում, թշնամին Զեքալքեանդից ուժեղ կերպով ընկում է սմրակոծել Քեաքիմարագի հայաստրական զիւրքերը:

19-ին Աւրմա է հասնում մի հայդին -

ւոր, որը յայտնում է թէ ինքը Անդրանիկի բանակից է, թէ Անդրանիկը 5000 զինւորներով 2 լեւոնային և 1 դաշտային թնդանօթներով մօտ 2000 դադթակառններով յարձակեց Խոյի վրայ, Սալմաստ անցնելու մօքով, կռուում ինքը 50 զինւորների հետ միասին պաշարւում են Խոյի պարիսպների մօտ, իրեն և մի սալմաստեցի կամաւորի, նոյն վաշտից, յաջողւում է փախչել դէպի Սալմաստ գիւղերով, Սալմաստում գտնում է տաճկական զօրք. կորցնելով իր ընկերոջ, լեւոներով գաղտնի անցնում է Աւրմիտ:

Պատմում է նաև որ Արիիջանից անցնելիս Անդրանիկը բանակին յայտնել է, թէ Թիֆլիսը, Ղարսը և Ալէքսանդրօպոլը արդէն գրաւել են տաճիկները, իսկ Նրեանը պաշտպանել է. բայց վառնգը այնտեղին էլ է ըստառնում: Իսկ ինքը Անդրանիկը կոչ է առնում պատուով մինչև վերջ մեռնողներին լեւոներով իրա հետ միասին անցնել Սալմաստ, ուր կայ հայկական մեծ ոյժ և մօտ է նրանց Անդլիական բանակը: Բոլոր եղած զինւորները համաձայնում են մինչ վերջ հաւատարիմ մնալ Անդրանիկին, մի մասն էլ իրենց հետ են վերցրել իրենց ընտանիքները:

Լեւոներով երկար ճանապարհորդելով հասնում են Ջուլֆա, այնտեղից անցնում Խոյ, ուր և պատահում են տաճկական բանակին և ընդհարում: Իսկ թէ ինչով է վերջացել այդ կռիւը, ինքը չգիտէ, միայն են-

թաղրում է, որ փամփուշտի պակասութեան պատճառով կարող է պատահել Անդրանիկը բանակով յետ գնալ Ջուլֆա: Այդպիսի լուրերով և ռնորչութեամբ գրութիւնը չարունակւում է մինչ մայիս 25-ը:

25-ին առաւօտեան ժամը 8-ին քաղաքի վրայ երևում է մի օգանաւ. քաղաքի բոլոր ժասերից սկսում է հրացանաձգութիւն դէպի օգանաւը, ենթադրելով որ դա թշնամուն կարող է լինել: 15 րոպէից յետոյ բարերազգարաբ օգանաւը իջնում է անվառնդ քաղաքի պարիսպի մօտ: Ամբողջ քաղաքի ժպտվալով խոնւում է դէպի պարիսպ օգանաւի մօտ, որտեղից օդը թնդում է հսկայական տմբոխի ուրախ աղաղակներով—անգլիական է օգանաւը, մենք ժրկւած ենք, եկել է մեզ փրկելու:

Քաղաքի խուճապը անմիջապէս ուրախութեան է փոխւում: Օգաչուն յայտնում է որ ինքը գալիս է Միանայից, ուր գտնւում է Անգլիական բանակը, որտեղի հրամանատարից բերել է նամակ, ուղղւած հայ և ասորի ժողովրդներին:

Նամակում, Միանի անգլիական բանակի հրամանատարը, սղջունելով հայ և ասորի ժողովրդին, յայտնում է, որ իրենք միշտ երտածել են տեղական քրիստոնեայ ժողովրդի գոյութեան մասին մտածում են և այժմ, զիտեն նաև փամփուշտի և ռազմական այլ պիտանքների պակասութեան մասին, վաղուց

է ինչ իրենք պատրաստել են 70,000 լէրէլ 40,000 մօսին հրապաններէ՝ փամփուշաներ, 12 գնդացիներով, բայց յարմար առիթ չի հանգիպել հասցնելու:

Առաջարկում է գրաւոր օգոշու կապիտանի միջոցաւ յայտնել եղած գէնքերի, զինուորների, գէնքի ընդունակների և ժողովրդի քանակը նաև կարիքների մասին: Առաջարկում է կապ հաստատել Սային Առաջի գծով իրենց բանակի հետ, որպէսզի հնար լինի հաղաւ պէտք եղած ըստ կարիքները: Իրենց որոշած ռազմաթիւքի մասին տաճարկում է նշանակել օր և լինել Սային-Առաջ և ստանալ, որը կը լինի պարբերաբար և կապ կը կհաստատուի: Անմիջապէս կոչուում են ժողովներ և արւում հայ և ասորիների կողմից համապատասխան տեղեկութիւնները: Որոշած ռազմաթիւքների համար յայտնելով, որ յալիս 15-ին պէտք եղած քանակութեամբ մարդիք կուղարկեն ստանալու Սային-Առաջից:

Օգոշուն հաղորդում է մի շարք լուրեր՝ Կովկասի մասին յայտնում է որ ամբողջը տաճիկների ձեռքին է գտնուում, հայ և ուսս ժողովուրդը գաղթել է Բազու, որտեղ միացած տեղական ուսս և հայ ազգաբնակչութեան հետ մինչ այժմս պաշտպանուում է: Վրացիք բացարձակօրէն միացել են տաճիկներին, գաւաճանելով իրենց հարեան հայ և ուսս ժողովրդին, փոխարէնը ստանալով աւատոս-

միտ տաճիկների հովանաւորութեան տակ: Թաւրիզի մասին ինքը ցտոյգ տեղեկութիւն չունի, մի քանի ժամ է միայն մնացել Միանէ. գիտէ միայն նա, որ մեծ քանակութեամբ քրիստոնեայ գաղթականութիւն է հասել Թաւրիզից Միանէ: Անգլիական հետախոյզները մինչև Թաւրիզի պարիսպներն են հասնում: Հաւանական է կարճ ժամանակամիջոցում Թաւրիզը գրաւի և տաճիկները հեռանան Ատրպատականից: Օգոշուն մի օր մնալուց յետոյ (յունիս 26-ին) վերադառնում է Միանէ: Նոյն օրը Անդրանիկի բանակից գալիս է մի զինուոր ևս, որը յայտնում է նոյնը, ինչ նրա նախորդը:

